ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.01.2018թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼՈՐՈՇՈՒՄ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ՍՑ-ԱՄ-2017/77

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, հիմք ընդունելով ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 26.12.2017թ. թիվ ԱՎԴ/3179/02/17 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով 29.12.2017թ. տրված թիվ ԱՎԴ/3179/02/17 կատարողական թերթի հիման վրա ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Արարատի մարզային բաժնի կողմից թիվ 03934976 կատարողական վարույթ հարուցելու մասին 10.01.2018թ. որոշումը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 99-րդ հոդվածի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.11.2017թ. թիվ 03/26-3/21285-17 գրությամբ «Մոնոլիտ Կապիտալ Շին», «Էլլ-Գա-Ման» ՍՊ ընկերություններին և «Արմ Պլաստ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԱՄ-2017/77 պաշտոնական ընթացակարգը կասեցնել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**